

Ն Ո Ր Գ Ր Ք Ե Ր

Մ. ԱՐԻՖ. — «Աղբբեռնական ժողովրդի գրականությունը»: Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1961 թ., տպաքանակը 2000 օրինակ, 96 էջ, գինը՝ 17 կոպ.:

Այս աշխատության մեջ տեղեկություններ են տրված աղբբեռնական ժողովրդի գրականության և կուլտուրայի մասին: Առաջին էջերը նվիրված են հին ժամանակներից մինչև 16-րդ դարը ընկած ժամանակաշրջանի գրականությանը, մասնավորապես նաև աղբբեռնական ժողովրդի «Դադա Գորգադ» էպոսին (10—11-րդ դդ.):

Գրքում հեղինակն անդրադարձել է 12-րդ դարի նշանավոր բանաստեղծ Նիզամիի, Ի. Նասիմիի, Մահամադ Ֆիզուլիի, Մ. Ֆ. Ախունդովի և շատ ուրիշների ստեղծագործություններին: Նրանում հատուկ տեղ է հատկացված հայ և աղբբեռնական ժողովուրդների բարեկամության մոտիվներին՝ գրականության մեջ:

Գրքի վերջին էջերը նվիրված են աղբբեռնական սովետական գրականությանը և այդ շրջանի ականավոր գրողների ստեղծագործություններին:

Խ. Մ. ԳՅՈՒՆԱՂԱՐՅԱՆ. — «Ակեռակներ հայ մանկական գրականության պատմության»: Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1961 թ., տպաքանակը 2000 օրինակ, 246 էջ, գինը՝ 70 կոպ.:

Աշխատությունը բաղկացած է երեք գլուխներից, որոնցում քննության են առնված մանկական գրականության տեսության հարցերը, մինչև Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիան գոյություն ունեցող հայ մանկական գրականությունը, սովետահայ մանկական գրականության սկզբնավորման ու զարգացման պրոցեսը, ինչպես նաև վերջինիս արդի վիճակն ու առաջընթացի հեռանկարները:

«ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ». — Կազմեց Հասմիկ Սահակյանը, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1961 թ., տպաքանակը 3000 օրինակ, 460 էջ, գինը՝ 1 ռ.:

Գրքում տեղ են գտել 17—18-րդ դարերի մի շարք հայ աշուղների երգերը, որոնց մի մասը տպագրվում է առաջին անգամ:

Աշխատության ներածականում վերլուծված է աշուղական պոեզիան՝ կապված ժամանակաշրջանի ու գրականության զարգացման ընդհանուր պրոցեսի հետ:

Աշխատությունն ունի «կենսագրություններ, ծանոթագրություններ և բանասիրական դիտողություններ» վերնագրով բաժին, ինչպես նաև օգտագործած աղբյուրների, տեղանունների, պատմական անձնանունների, երգերի ցանկեր և բառարան:

Ն Ո Ր Կ Ր Ք Ե Ր

Տ. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.—Նար-Դոսի «Մանը» վեպը, Երևանի համալսարանի Հրատարակչություն, 1961 թ., տպաքանակը 1500 օրինակ, 174 էջ, գինը՝ 62 կոպ.:

Մենագրության մեջ քննության են առնված հայ ականավոր վիպասանի ստեղծագործական կյանքի համառոտակի պատմությունը և վերլուծված է «Մահը» վեպը:

Գ. ՏԻԳՐԱՆՅԱՆ.— «Կ. Ս. Սարաջյան», Հայպետհրատ, 1961 թ., տպաքանակը 3000 օրինակ, 119 էջ, գինը՝ 20 կոպ.:

Ուսումնասիրությունը նվիրված է սովետական ականավոր գիրիժյոր Կոնստանդին Սողոմոնի Սարաջյանի (Սարաջյանի) կյանքին ու գործունեությանը:

Հ. Հ. ԱՃԱՌՅԱՆ.— «Լիակատար Բերականուրյուն հայոց լեզվի», հատոր 4-րդ, գիրք 2-րդ, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1961 թ., տպաքանակը 3000 օրինակ, 541 էջ, գինը՝ 1 ու 80 կոպ.:

Ա. Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ.— «Հայերենի անկանոն բայերի զարգացումը», Երևանի համալսարանի Հրատարակչություն, 1961 թ., տպաքանակը 600 օրինակ, 57 էջ, գինը՝ 5 կոպ.:

Թ. Ա. ՂԱՐԱԳՅՈՒՆՅԱՆ.— «Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը», Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1961 թ., տպաքանակը՝ 1000 օրինակ, 180 էջ, գինը՝ 63 կոպ.:

Աշխատությունը նվիրված է գրաբարի խոնարհման համակարգի պատմա-համեմատական ուսումնասիրությանը: Քննության են ենթարկված հին հայերենի խոնարհման ձևերը և պարզաբանված է նրանց ծագումը:

Խ. Գ. ԳՈՒԼԱՆՅԱՆ.— «Մաբսիստական տնտեսագիտական մալի տարածումը հայ իրականության մեջ», Հայպետհրատ, 1961 թ., տպաքանակը 2000 օրինակ, 453 էջ, գինը՝ 67 կոպ.:

Սույն աշխատասիրությունը նույն հեղինակի «Հայ տնտեսագիտական մտքի պատմության արվագծեր»-ի շարունակությունն է, որ 1959 թ. հրատարակվել է Հայպետհրատի կողմից: Ներկա աշխատությունն ընդգրկել է 19-րդ դարի 90-ական թվականներից մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան ընկած ժամանակաշրջանը: